ԱՊՐԻԼ 2022

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՊԱՏՐԱՍՏՎԻ՛Ր

Նախքան համաժողովի սկսվելը, դուք կարող եք պատրաստվել, որպեսզի լսեք Տիրոջ ձայնը՝ փնտրելով ձեր անձնական հայտնությունը:

- Արդյո՞ք ժամանակ եմ հատկացրել անձնական աղոթքի համար:
- Արդյո՞ք ես կարդացել եմ իմ սուրբ գրությունները:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՐԱՆՑԵԼ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ ՍՏԱՑԱԾ ԹԱՆԿԱԳԻՆ ՄՏՔԵՐՆ ՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ ՁԵՐ ԳԱՆՁԵՐՆ ԵՆ:

ՀԱՐՑՐԵ՛Ք,

Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդն ուսուցանել է. «Հայտնությունը գրեթե միշտ ստանում ենք ի պատասխան որևէ հարցի»:[1]

ԻՄԿ ՀԵՏՈ ԼՍԵ՛Ք

Գերագույն համաժողովը հիանալի հնարավորություն է սովորելու այն, ինչ Տերը կցանկանար, որ դուք իմանայիք և անեիք: Բայց ինչպե՞ս եք իմանում, որ Նա խոսում է ձեզ հետ: Այն սկսվում է, երբ մտածում եք ձեր կյանքի և ձեր կարիքների մասին:

Ահա որոշ բաներ, որոնց մասին պետք է մտածել.

Ժամանակ հատկացրեք և գրեք, թե ինչ անձնական ցուցումներ եք ակնկալում, որ Տերը ձեզ կտա համաժողովի ընթացքում:

Գերագույն համաժողովը լսելիս հիշեք այս հարցերը: Տերը կարող է ձեզ անհատական ցուցումներ տալ:

Հիմա ի՞նչ եմ անում, որ պետք է դադարեմ անել:

Ապագայում ինչի՞ համար պետք է պատրաստվեմ:

Ի՞նչ կարող եմ անել իմ առջև ծառացած մարտահրավերների հետ:

Քրիստոսանման ո՞ր հատկանիշները կարող եմ բարելավել:

_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ չեմ անում, որ պետք է սկսեմ անել հիմա:

ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵՔ

Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու են մարդիկ նշումներ կատարում համաժողովի ընթացքում: Նշումներ կատարելով դուք ավելի մեծ եք ուշադրություն դարձնում և հիշում այն, ինչ լսում եք: Երբ նշումներ եք կատարում, ցույց եք տալիս Տիրոջը, որ պատրաստ եք անձնական հայտնություն ստանալ և գործել ըստ այդ հայտնության:

Փորձե՛ք: Երբ լսում եք համաժողովը, մի անհանգստացեք, որ խոսնակների խոսքերը չեք հասցնում գրի առնել բառ առ բառ: Եթե ինչ-որ բան բաց եք թողնում, միշտ կարող եք վերադառնալ և կարդալ կամ դիտել այն ավելի ուշ: Նրանց ելույթների ժամանակ կենտրոնացեք և գրեք ձեր մտքերն ու տպավորությունները: Եթե դրանք գրի առնեք այդ պահին, ապա ստիպված չեք լինի հետագայում հիշել դրանք:

Նրանք ի՞նչ ասացին.

Ի՞նչ զգացմունքներն ու տպավորությունները.

Խորհրդի կարի՞ք ունեք, թե ինչպես նշումներ կատարեք: Ահա որոշ խորհուրդներ .

«Երբ ես համաժողովի ժամանակ գրառումներ եմ կատարում, միշտ չէ, որ ճշգրտորեն գրում եմ այն, ինչ ասում է խոսնակը. ես գրի եմ առնում անհատականացված ուղղորդումը, որը Հոգին տալիս է ինձ: Այն, ինչ *ասվում է*, այնքան կարևոր չէ, որքան այն, ինչ մենք ենք *լսում* և այն, ինչ մենք ենք *զգում*»:

Elder Robert D. Hales (1932–2017)[2]

Նրանք ի՞նչ ասացին.

ՀԱՏՈՒԿ ՀՐԱՎԵՐՆԵՐ

Եկեղեցու ղեկավարները հաճախ հրավերներ են հղում, որպեսզի օգնեն մեզ հոգևորապես աճել: Լսե՞լ եք նիստերի ընթացքում որևէ հատուկ հրավեր: Գրեք դրանք այստեղ, որպեսզի չմոռանաք:

Իմ զգացմունքներն ու տպավորությունները.

ԴԱԴԱ՛Ր ՏՎԵՔ:

Դուք մինչ այս պահը ստացե՞լ եք ձեր հարցերի պատասխանները: Եթե ստացել եք, ապա մի պահ ժամանակ գտեք և գրեք ձեր ստացած առաջնորդությունը և ցուցումները:

«Խոստանում եմ ձեզ, որ երբ լսեք ձեզ ուղղված Տիրոջ ձայնը այս գերագույն համաժողովի ելույթների մեջ, իսկ հետո շարժվեք ըստ հուշումների, դուք Աստծո աջը կզգաք ձեր գլխին, և կօրհնվի ձեր ու ձեզ շրջապատողների կյանքը»:

Երեց Նիլ Լ. Անդերսեն[3]

«Գերագույն համաժողովի մեծագույն օրհնությունները գալիս են, երբ համաժողովն ավարտվում է: Հիշեք սուրբ գրություններում հաճախ կրկնվող ուղին. մենք հավաքվում ենք լսելու Տիրոջ խոսքը և վերադառնում ենք մեր տները՝ դրանցով ապրելու համար»:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս[4]

Նրանք ի՞նչ ասացին.

Իմ զգացմունքներն ու տպավորությունները.

ԴԱԴԱՐ ՏՎԵՔ:

Լրացուցիչ մտքեր ստացե՞լ եք այն բաների մասին, որոնք դուք պետք է շարունակեք անել, դադարեք անել կամ սկսեք անել՝ ձեր կյանքը բարելավելու համար:

ՀԱՏՈՒԿ ՀՐԱՎԵՐՆԵՐ

Եկեղեցու ղեկավարները հաճախ հրավերներ են հղում, որպեսզի օգնեն մեզ հոգևորապես աճել: Լսե՞լ եք նիստերի ընթացքում որևէ հատուկ հրավեր: Գրեք դրանք այստեղ, որպեսզի չմոռանաք:

Ո՞ՐՆ Է ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Ի՞նչ հրաշալի փորձառություն էր լսել առաքյալների և մարգարեների վկայությունները: Դուք ստացե՞լ եք որևէ ցուցում, որը կարող է օգնել ձեզ ձեր կյանքում:

Այժմ հիանալի ժամանակ է նպատակներ դնելու համար, որոնք կօգնեն ձեզ գործել սովորածի համաձայն: Ահա որոշ մտքեր.

- ◯ Ընտրեք մեկ կամ երկու անհատականացված ցուցում և կազմեք գործելու ծրագիր:
- ◯ Ծրագիր կազմեք այն մասին, թե ինչպես գործեք որևէ մարտահրավերի կամ հրավերի համաձայն, որը դուք լսել եք:
- ◯ Լսեք համաժողովի ելույթը ամեն առավոտ՝ դպրոցին պատրաստվելիս:
- ◯ Ձեր նախընտրած պատմություններից կամ մեջբերումներից մեկը պատմեք ընկերոջը կամ տեղադրեք սոցիալական լրատվամիջոցներում:
- ◯ Ծրագրեք, թե ձեր ընտանիքը երբ կարող է կիսվել այն ամենով, ինչը նրանց դուր եկավ համաժողովի ելույթներից:
- ◯ Ունե՞ք այլ գաղափար: Գրեք ձեր նպատակը.

_____

_____

_____

_____

Այս էջի այս հատվածը կտրելու համար օգտագործեք մկրատ: Այնուհետև այն կարող եք փակցնել մի տեսանելի վայրում, որտեղ ամեն օր կտեսնեք այն՝ ձեր նպատակները հիշելու համար:

«Ձեր հատուկ աղոթքների պատասխանները կարող են գալ անմիջապես որևէ ելույթից կամ արտահայտությունից:. . . Խորհրդին հետևելու անկեղծ ցանկությունը կպատրաստի անձնական հայտնության ուղին»:

Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ[5]

ԱՎԵԼԻ ՇԱՏ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԻՔ ԿԱ՞:

Ներբեռնեք և տպեք այս հուշատետրը
conference.ChurchofJesusChrist.org-ից:

Հղումներ

1. Jeffrey R. Holland, “Cast Not Away Therefore Your Confidence,” Ensign, Mar. 2000, 9.
2. Ռոբերտ Դ Հեյլս, հոկտեմբեր 2013 գերագույն համաժողով (Ensign, կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2013, 6):
3. Նիլ Լ . Անդերսեն, 2017 թ . հոկտեմբերի գերագույն համաժողով (Ensign կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2017, 126):
4. Ռոբերտ Դ. Հեյլս, հոկտեմբեր 2013 գերագույն համաժողով (Ensign, կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2013, 7):
5. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Գերագույն Համաժողով՝ ոչ սովորական օրինություն», Ensign կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2011, 4:

© 2022 by Intellectual Reserve, Inc.
All rights reserved.

ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԻ ՎԵՐԱՏՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԱՆՁՆԱԿԱՆ, ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: ՍԱ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԾԽԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ՝ ՏՊԵԼՈՒ ՓՈՔՐ ԹՎՈՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՒՄ ԻՐԵՆՔ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ: ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԱԳՐՎԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ: ՍԱ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԱՅԴ ՆՅՈՒԹԸ ԱՌՑԱՆՑ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ, ՈՒՐԻՇ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍ ՆՅՈՒԹԻ ՈՐԵՎԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ:

permissions.
ChurchofJesusChrist.org



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ